Մրցույթ՝ «Երևանի Գևորգ Վարդանյանի անվան հ.192 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Ֆիզկուլտուրա» (27 դասաժամ), «Կերպարվեստ» (10 դասաժամ), «Քիմիա» (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար, 3 դասաժամ), «Կեսաբանություն» (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար, 4 դասաժամ), ինչպես նաև «Ֆիզիկա» (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար, 4 դասաժամ) առարկաների ուսուցչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3×4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թվականի հունիսի 21-ից մինչև հուլիսի 4-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. հուլիսի 10-ին՝ ժամը 12:00-ին**, **Երևանի Գևորգ Վարդանյանի անվան հ.192** հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն, 2-րդ թաղամաս:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 36-98-80 հեռախոսահամարով: